

**Քենեթ Գրեհեմի «Քամին ուռիների մեջ»
ստեղծագործության ճարտասանական
դարձույթները, նրանց ոճական արժեքը և հայերեն
թարգմանության խնդիրը**

Սույն հոդվածում քննարկվում են ճարտասանական դարձույթները՝ ճարտասանական հարցը, ճարտասանական բացականչությունը ու ճարտասանական դիմումը: Ճարտասանական դարձույթները հույզեր, զգացմունքներ դրսևորելու լավագույն միջոց են հանդիսանում: Ճարտասանական դարձույթների միջոցով Գրեհեմը փորձում է արտահայտել իր հերոսների զգացմունքները, նրանց հոգեկան և հուզական աշխարհը, որոնք իրենց համարժեք դրսևորումներն են գտել թարգմանական տարբերակում: Այս հնարների միջոցով հեղինակը հաճախ արտահայտում է նաև իր տրամադրությունը, ներքին ապրումներն ու հույզերը: Ուսումնասիրվող գրքում ամենից հաճախ գործածվող հնարը ճարտասանական բացականչությունն է, որի կիրառությամբ բացականչական հատուկ հնչերանգի շնորհիվ հեղինակը իր հերոսների խոսքին հաղորդում է յուրահատուկ զգացմունքային երանգ, արտահայտչականություն: Այս հնարանքի միջոցով գրքի հերոսներն արտահայտում են ուրախություն, հուզմունք, հիացմունք, զարմանք, ցասում, պահանջ և այլն:

Հիմնաբառեր. ճարտասանական դարձույթ, ճարտասանական հարց, ճարտասանական բացականչություն, ճարտասանական դիմում, գեղարվեստական գրականություն, հրապարակախոսական ոճ, առօրյա-խոսակցական ոճ, ոճական հնարանք, շարահյուսական ոճական հնարանք:

Ճարտասանական դարձույթներն են՝ ճարտասանական հարցը, ճարտասանական բացականչությունը ու ճարտասանական դիմումը:

Ճարտասանական հարցը հույզեր, զգացմունքներ դրսևորելու լավագույն միջոց է, որի դեպքում հարցական հնչերանգի միջոցով արտահայտվում է դրական, հաստատական իմաստ, երբեմն նաև ժխտում, երկբայություն:

Ճարտասանական բացականչությունը (կամ կոչը) ոճական-շարահյուսական դարձույթ է, որի կիրառությամբ բացականչական հատուկ հնչերանգի շնորհիվ խոսքին հաղորդվում է յուրահատուկ զգացմունքային երանգ, արտահայտչականություն: Ոճական այս հնարանքը հատկապես գործածական է գեղարվեստական, հրապարակախոսական (երբեմն նաև առօրյա-խոսակցական) ոճերում, այն կարող է արտահայտել ուրախություն, հուզմունք, հիացմունք, զարմանք, ցասում, պահանջ և այլն: (Եզեկյան, 2003, 361)

Ճարտասանական կոչերը հիմնականում պայմանավորված են հեղինակի կամ որևէ անհատի տրամադրու-

թյամբ և մեծ մասամբ վայրկենական տպավորության կամ ոգևորության արդյունք են:

Ինչպես նկատել է Ա. Ռուբայլոն, ճարտասանական կոչը ենթադրում է իրականության ընկալման յուրահատուկ, անսովոր մթնոլորտի առկայությունը, երբ հաճախ այդ կոչի ձևերի անսովորությունը աննկատ է լինում: (Рубайло, 1961, 60)

Ճարտասանական դիմումը հեղինակի կամ որևէ մեկ այլ անհատի հույզերի, ապրումների արտահայտման լավագույն միջոց է, երբ խոսողը խոսքն ուղղում է ոչ միայն ներկաներին, խոսակցին, այլև հաճախ նաև մտովի դիմում է բացակա մարդկանց, բնությանը, բնության առանձին երևույթներին ու առարկաներին, դրանով իսկ առավել ևս խոսքը դարձնում հուզիչ ու ներգործուն: Ճարտասանական դիմումի միջոցով հեղինակը հաճախ արտահայտում է իր տրամադրությունը, ներքին ապրումներն ու հույզերը, և ոճական այս հնարանքը հաճախ դարձնում իր ստեղծագործության սկիզբ, նախերգանք: (Եզեկյան, 2003, 362)

‘O Ratty!’ he cried dismally, ‘why ever did I do it? Why did I bring you to this poor, cold little place, on a night like this, when you might have been at River Bank by this time, toasting your toes before a blazing fire, with all your own nice things about you!’ (pp. 136-137)

-Մկնի՜կ ջան, Մկնի՜կ,- հուսահատ գոչեց նա:- Այս ի՜նչ արեցի: Ինչու՞ քեզ այստեղ բերեցի՝ այս խեղ-

ճուկրակ, ցուրտ ու մութ կացարանը, այսպիսի մի
սուկայի գիշեր, երբ դու կարող էիր նստել Գետա-
փին՝ թաթերդ կրակի դեմ պահած, շուրջդ ամեն ինչ՝
սիրուն-նախշուն: (էջ 103)

Այս օրինակում Խլուրդը հուսահատորեն ինքնախարա-
զանմամբ էր զբաղվում (*why ever did I do it? Why did I bring
you to this poor, cold little place, on a night like this, when you
might have been at River Bank by this time, toasting your toes
before a blazing fire, with all your own nice things about you!*-
Այս ինչ արեցի: Ինչու՞ քեզ այստեղ բերեցի՝ այս խեղճուկ-
րակ, ցուրտ ու մութ կացարանը, այսպիսի մի սուկայի գի-
շեր, երբ դու կարող էիր նստել Գետափին՝ թաթերդ կրակի
դեմ պահած, շուրջդ ամեն ինչ՝ սիրուն-նախշուն:), և սա չէր
էլ ենթադրում պատասխան, քանի որ Ջրամուկն էլ իր հեր-
թին ուշադրություն չէր դարձնում Խլուրդի ինքնաձաղկմա-
նը և այս ու այս կողմ էր վազում՝ ինչ-որ գործեր անելով:
Այս օրինակում մենք ունենք և՛ ճարտասանական հարց, և՛
ճարտասանական բացականչություն: Հայերեն թարգմա-
նության մեջ էլ հստակ տեսնում ենք ճշգրիտ ձևով (այն է՝
ճարտասանական դարձույթներով) արտահայտված
ճշգրիտ բնագրային իմաստ:

*Poor Ratty did his best, by degrees, to explain things; but
how could he put into cold words what had mostly been
suggestion? How recall, for another's benefit, the
haunting sea voices that had sung to him, how reproduce*

at second-hand the magic of the Seafarer's hundred reminiscences? (p. 233)

Խեղճ Մուկիկը ձեռքից եկածն արեց, ջանք չինայեց, մաս առ մաս բացատրեց կատարվածը, բայց ինչպե՞ս կարող էր պատ, անկենդան բառերով արտահայտել այն, ինչ իրեն առաջարկված էր: Ինչպե՞ս վերականգնել, ուրիշի սրտին հասցնել ռոնացող ծովի շառաչները, որոնք իր համար երգ էին հյուսել, ինչպե՞ս վերարտադրել Ծովագնացի բազմաթիվ վերհուշ-հիշողությունների հրաշքը: (էջ 197)

Այս օրինակում հեղինակը փորձում է ճարտասանական դարձույթներով (*but how could he put into cold words what had mostly been suggestion?*– բայց ինչպե՞ս կարող էր պատ, անկենդան բառերով արտահայտել այն, ինչ իրեն առաջարկված էր: *How recall, for another's benefit, the haunting sea voices that had sung to him, how reproduce at second-hand the magic of the Seafarer's hundred reminiscences?*– Ինչպե՞ս վերականգնել, ուրիշի սրտին հասցնել ռոնացող ծովի շառաչները, որոնք իր համար երգ էին հյուսել, ինչպե՞ս վերարտադրել Ծովագնացի բազմաթիվ վերհուշ-հիշողությունների հրաշքը:) նկարագրել Խեղճ Մուկիկի վիճակը: Նա ներկայացնում է, թե ինչքան դժվար էր նույնիսկ հենց իր՝ Ջրամկան համար բացատրել այն, ինչ մի քանի ժամ առաջ անխուսափելի էլք էր համարվում և միակն էր: Ուստի զարմանալի չէ, որ չկարողացավ Խլուր-

դին պարզ ու հստակ ներկայացնել այդ օրվա անցուդարձը: Խլուրդի համար ամեն ինչ պարզ էր. նույն կամ պոռթկումն անհետացել էին՝ թողնելով խեղճ Մկնիկին առաջվա պես խելամիտ, թեև ճնշումն ու մղումն անհետ չէին կորել: Բայց նա որոշ ժամանակ կորցրեց հետաքրքրությունն ու կիրքը այն բաների նկատմամբ, որոնք իր առօրյա կյանքն էին կազմում: Այնուհետև Խլուրդը թվացյալ անտարբերությամբ փոխեց ու անցավ առօրյա խնդիրների թեմաներին: Այս բնագրային իրավիճակը նույն դարձույթներով արտահայտված է նաև հայերեն տարբերակում:

'I know it's a – shabby, dingy little place,' he sobbed forth at last, brokenly: 'not like – your cosy quarters – or Toad's beautiful hall – or Badger's great house – but it was my own little home – and I was fond of it – and I went away and forgot all about it – and then I smelt it suddenly – on the road, when I called you and you wouldn't listen, Rat – and everything came back to me with a rush – and I wanted it! – O dear, O dear! – and when you wouldn't turn back, Ratty – and I had to leave it, though I was smelling it all the time – I thought my heart would break. – We might have just gone and had one look at it, Ratty – only one look – it was close by – but you wouldn't turn back, Ratty, you wouldn't turn back! O dear, O dear!' (pp. 132-133)

– Ես գիտեմ, որ տունս մի բանի նման չէ, խղճուկ է ու աղքատ: Եվ հեջ էլ նման չէ քո հարմարավետ տանը, ոչ էլ Դոդոշի շքեղ տանը, կամ էլ Գորշուկի մեծ տանը, բայց այն իմ սեփական տունն է, իմ սեփականը, ու ես էլ շատ եմ սիրում իմ տունը, բայց ես հեռացա ու մոռացա և երբ նորից հանկարծ տանս հոտն առա ճանապարհի վրա, քեզ ձայն տվեցի, դու էլ չլսեցիր, Մկնի՛կ ջան, և ամեն ինչ անմիջապես հետ եկավ, ես էլ այնպես ուզեցի, որ գնամ հասնեմ տուն:

– Իսկ դո՞ւ, ա՛յս, ի՞նչ ասեմ, ո՞նց բացատրեմ: Դու շուռ անգամ չեկար, չլսեցիր ինձ, ես էլ ստիպված թողեցի անցա, եկա մոտդ՝ չնայած կարող էինք գնալ մտնել տուն, գոնե մի անգամ մտնել ու դուրս գալ: Բայց դո՛ւ, Մո՛ւկ, նույնիսկ չջրջվեցիր, հետ չնայեցիր: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ: (էջ 99)

Գրքի հինգերորդ գլխում (վերնագրված «Տուն, քաղք տուն») Խլուրդն ու Ջրամուկն են զրուցում, որտեղ Ջրամուկը, Խլուրդի անհուն վշտից քար կտրած, չէր համարձակվում բերանը բաց անել, մի բան ասել: Խեղճ Խլուրդն էլ հեկեկոցների միջից հազիվ լսելի ձայնով տրտնջալով խոսում էր իր տան մասին, որն այնքան թանկ և կարևոր էր իր համար: Ամբողջ խոսքում պարբերաբար ճարտասանական դարձույթներ օգտագործելով (*and I wanted it! – O dear, O dear! ... but you wouldn't turn back, Ratty, you wouldn't turn back! O dear, O dear!* – ես էլ այնպես ուզեցի, որ գնամ հաս-

նեմ տուն: Իսկ դո՛ւ, ա՛խ, ի՞նչ ասեմ, ո՞նց բացատրեմ: Բայց դո՛ւ, Մո՛ւկ, նույնիսկ շքշվեցիր, հետ չնայեցիր: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ:) փորձում է ցույց տալ, թե ինչքան է Խլուրդը գոջում, որ թողել և հեռացել էր իր հարազատ տնից, և թե ինչքան էր Մկնիկին մեղադրում, որ նա իր տուն չի մտել, ավելին, նույնիսկ չի շքվել և մի հայացք գցել իր տան վրա: Թարգմանիչը հայերենում օգտագործել է նույն միջոցները, որպեսզի հնարավոր լինի արտահայտել Խլուրդին իր ողջ հուզական կերպարով: Այս վերհուշը վշտի թարմ ալիքներ է բերում, և հեկեկոցները կրկին խեղդում են Խլուրդի կոկորդը՝ թույլ չտալով խոսքն ավարտին հասցնել: Իսկ Ջրամուկն անթարթ և անխոս նայում էր դիմացը՝ մեղմորեն թփթփացնելով Խլուրդի ուսին: Քիչ անց նա տխուր-տրտում ասում է.

'I see it all now! What a pig I have been! A pig – that's me! Just a pig – a plain pig!' (p. 133)

-Հիմա եմ հասկանում: Ա՛յ թե խոզություն էր արածս: Խո՛զ եմ, խո՛զ, ուրիշ ոչինչ: Պարզապես ոչինչ: (էջ 100)

Այս օրինակը նախորդ իրավիճակի շարունակությունն է, որտեղ թե՛ անգլերեն և թե՛ հայերեն տարբերակներում մենք տեսնում ենք Ջրամուկան խոսքն՝ արտահայտված ճարտասանական բացականչությամբ, որտեղ նա ինքն իրեն մեղադրում է խոզության մեջ, և մի պահ անց, երբ Խլուրդի հեկեկոցները սկսում են հանդարտվել, կանոնավորվել, նա Խլուրդին տանում է նրա տունը փնտրելու:

The Rat paid no heed to his doleful self-reproaches. He was running here and there, opening doors, inspecting rooms and cupboards, and lighting lamps and candles and sticking them up everywhere. ‘What a capital little house this is!’ he called out cheerily. ‘So compact! So well planned! Everything here and everything in its place! We’ll make a jolly night of it. The first thing we want is a good fire; I’ll see to that – I always know where to find things. So this is the parlour? Splendid! Your own idea, those little sleeping-bunks in the wall? Capital! Now, I’ll fetch the wood and the coals, and you get a duster, Mole – you’ll find one in the drawer of the kitchen table – and try and smarten things up a bit. Bustle about, old chap!’
(p. 137)

Ջրամուկն ուշադրություն չդարձրեց Խլուրդի հուսահատ ինքնաձաղկմանը: Նա այս ու այն կողմ էր վազ տալիս, դռներ էր բացում-փակում, սենյակներ էր մտնում-դուրս գալիս, պահարաններ էր բացում-փակում, մոմեր ու լամպեր էր վառում, այս ու այնտեղ տեղադրում:

– Այս ի՛նչ հիանալի պինդ տուն է,– ուրախ-զվարթ գոչեց նա: – Այնքան քիփլիկ, այնքան կոկլիկ, այնքան լավ նախագծված: Ամեն ինչ իր տեղում է: Մենք ուրախ գիշեր կանցկացնենք այստեղ: Հենց հիմա մի թեժ կրակ կվառենք: Ես կգրադվեմ դրանով: Ես լավ

գիտեմ, թե որտեղ ինչ գտնել: Ուրեմն սա հյուրասենյակն է: Հիանալի՛ է: Այդ դռ՛ն էս մտածել պատին կպած քնատեղեր սարքել: Չտեսնված է: Հիմա գնամ փայտ ու ածուխ բերեմ: Իսկ դու վերցրո՛ւ փոշու շոքր: Խլուրդի՛կ, խոհանոցի դարակը բա՛ց, շոքր վերցրո՛ւ, մի քիչ կարգի՛ բեր շուրջդ: Դե՛, արա՛գ, գործի՛ անցիր, սիրելի՛ բարեկամս: (էջ 103-104)

Այս հատվածում Խլուրդն ու Ջրամուկը գալիս են Խլուրդի տուն: Ներս մտնելուն պես Խլուրդի դեմքը պայծառանում է՝ տեսնելով իրեն հարազատ ու սիրելի առարկաները: Նա Ջրամկանը շտապ ներս է բերում, նախասրահում լույս վառում և մի կարոտալից հայացք զգում տան մեջ: Ջրամուկն սկսում է տունն ուսումնասիրել և տան գովքն անել (*What a capital little house this is! So compact! So well planned! Everything here and everything in its place!* – Այս ի՛նչ հիանալի պինդ տուն է: Այնքան քիփլիկ, այնքան կոկլիկ, այնքան լավ նախագծված: Ամեն ինչ իր տեղում է: *So this is the parlour? Splendid! Your own idea, those little sleeping-bunks in the wall? Capital!* – Ուրեմն սա հյուրասենյակն է: Հիանալի՛ է: Այդ դռ՛ն էս մտածել պատին կպած քնատեղեր սարքել: Չտեսնված է): Նրա խոսքի հիմքում ճարտասանական հարցն ու բացականչությունն են, քանի որ նա հարց է տալիս և հաջորդ իսկ պահին մեկնաբանություն անում իր տված հարցի ակնկալվող պատասխանի վերաբերյալ, ինչպես օրինակ՝ «*Your own idea, those little sleeping-bunks in*

the wall? Capital! – Այդ դո՞ւ ես մտածել պատի՛ն կպած քնատեղեր սարքել: Չտեսնված է:»: Այնուամենայնիվ, հայերենում անգլերեն հարցերից մեկը թարգմանված է որպես հաստատական նախադասություն՝ «*So this is the parlour? – Ուրեմն սա հյուրասենյակն է:»* Ավելի նպատակահարմար կլիներ այն թարգմանել որպես հարց՝ «*So this is the parlour? – Ուրեմն սա հյուրասենյա՞կն է:»*

Այսպես, ճարտասանական դարձույթների միջոցով Գրեհեմը փորձում է արտահայտել իր հերոսների զգացմունքները, նրանց հոգեկան և հուզական աշխարհը, որոնք իրենց համարժեք դրսևորումներն են գտել թարգմանված սարքերակում:

Գրականության ցանկ

1. Գրեհեմ Բ., Քամին ուռիների մեջ, Երևան, 2012:
2. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան, 2003:
3. Պողոսյան Պ. Մ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, խոսքի տեսություն, գիրք երկրորդ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1991:
4. Grahame K., The Wind in the Willows, Moscow, Progress Publishers, 1981.
5. Рубайло А., Художественные средства языка, М. 1961.

**Rhetorical Stylistic Devices in Kenneth Grahame's
"The Wind in the Willows", Their Stylistic Value and
the Problem of Their Translation**

The present article touches upon the rhetorical stylistic devices: rhetorical question, rhetorical exclamation and rhetoric address. These rhetorical devices are the best way to express emotions and feelings. Kenneth Grahame uses these devices to show his characters' feelings, their psychological and emotional world, which have been properly translated into the Armenian version. These devices express the writer's mood and inner feelings as well. Rhetorical question is more often used in the book studied with the use of which the author gives the speech of his characters a special emotional colouring and expressiveness. The characters express their joy, excitement, astonishment, anger, claim and so on.

Key words: rhetorical device, rhetorical question, rhetorical exclamation, rhetoric address, fiction, publicistic style, colloquial style, stylistic device, syntactical stylistic device.

**Стилистическое значение риторических оборотов в сказке
Кеннета Грэма «Ветер в ивах» и проблема армянского
перевода**

В данной статье обсуждаются риторические обороты: риторический вопрос, риторическое восклицание и риторическое обращение. Риторические обороты являются лучшим способом проявить эмоции, чувства. С помощью риторических оборотов Кеннет Грэм пытается выразить чувства своих героев, их психологический и эмоциональный мир, которые нашли своё равноценное проявление в переведенной версии. С помощью этих методов автор часто выражает своё настроение, внутренние ощущения и эмоции. В изучаемой книге наиболее часто используемый метод – риторическое восклицание, использование которого позволяет автору придать речи своим героям особый эмоциональный тон, выразительность. Через этот приём герои книги выражают радость, волнение, восторг, удивление, ярость, требование и так далее.

Ключевые слова: Риторический оборот, риторический вопрос, риторическое восклицание, риторическое обращение, художественная литература, публицистический стиль, разговорный стиль, стилистический прием, синтаксический стилистический прием.